ՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03

«14» 05 2021թ.

Երևան

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գլուկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բանգոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2021 թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6873048 (վեց միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար քառասունութ) ՀՀ դրամ, որից 1145508 (մեկ միլիոն հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր

(տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կադաստրի կոմիտե ք. Երևան Արշակունյաց 7 Հ/Հ 900011030815 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 02534328	«Գլուկ» ՍՊԸ ք. Երևան, Սևանի փ. 21 Հ/Հ 11811008003300 ՀՎՀՀ 00910785
Գլխավոր քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան /ստորագրություն/ Կ.Տ	տնօրեն----------Բանգոյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ 5-ՐԴ ՀԱՆԳՎԱԾԻ ՄԻԿՈՅԱՆ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԿԻՍԱԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալ	Միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Քանդման և տեղափոխման աշխատանքներ				
-	- -	-	-	-	-
1	Դռան ապամոնտաժում	մ^2	2.94	1.32	3.881
2	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ^2	6.50	0.18	1.170
3	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչ և 13կմ	տ	126.87	3.51	445.303
	Ընդամենը				**450.354**
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				**4.89%**
	Կառուցողական աշխատանքներ				
1	50x4 անկյունակի արժեքը	գմ	8.40	1.71	14.364
2	Ե/բետոնե միաձույլ բարավորների պատրաստում B12,5 դասի բետոնից	մ^3	0.49	84.07	41.194
	Ընդամենը				**55.558**
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				**0.60%**
	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող	մ^2	0.16	41.62	6.659
2	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում չբացվող	մ^2	0.16	26.28	4.205
3	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 450մմ լայնությամբ	մ^2	1.35	1.57	2.120
4	Պատուհանագոգ լայնությունը 450մմ արժեքը	գծմ	3.00	5.39	16.170
5	Մետաղական դռան փականներ	հատ	4.00	4.76	19.040
6	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում	մ^2	23.04	0.67	15.437
7	Երկաթյա դռան տեղադրում	մ^2	11.52	67.91	782.323
	Բետոնի շերտի պատրաստում B15 դասի բետոնից պատուհանների տակ	մ^3	0.80	44.67	35.736

8					
	Ընդամենը				881.690
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					9.58%
Հատակներ					
1	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ^2	6.00	1.32	7.920
2	Հատակների պատրաստում կերամոգրանիտե սալերից 800x800	մ^2	60.00	30.18	1,810.800
3	Կերամոգրանիտե շրիշակների պատրաստում, h=10սմ	գմ	44.00	3.44	151.360
	Ընդամենը				1,970.080
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					21.41%
Ներքին հարդարման աշխատանքներ					
1	Շեպերի մետաղական հարդարող անկյունակների տեղադրում	գմ	36.00	0.25	9.000
2	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի /նոր սվաղ/	մ^2	40.20	2.29	92.058
3	Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի /նոր սվաղ/	մ^2	54.10	2.29	123.889
4	Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում	մ^2	13.70	5.44	74.528
5	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով բարելավված որակի	մ^2	118.80	1.71	203.148
6	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, մածկապատմամբ	մ^2	60.00	1.86	111.600
	Ընդամենը				614.223
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					6.68%
Տանիքի աշխատանքներ					
1	Տանիքի փայտե կոնստրուկցիաների տեղադրում (ծպեղնատոք, հենահեծան, կանգնակ, թեքան, տախտակամած)	մ^3	0.80	236.82	188.746
2	Տանիքի ծածկի իրականացում ԿՈ25-0.55մմ ցինկապատ թիթեղով՝ ներառյալ կավարամածը	մ^2	75.00	7.16	537.000
3	Փոքր ծածկույթների իրականացում հարթ ցինկապատ թիթեղից 0.55մմ հաստ.	մ^2	22.40	4.83	108.192
4	Ջրհորդանների իրականացում ցինկապատ 0.55մմ թիթեղով՝ տախտակամածի իրականացմամբ	գմ	2.00	14.79	29.580
5	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից Φ100մմ, ներառյալ ջրհոս ծագարները	կ-տ	2.00	29.96	59.920
6	Մետաղական ճաղաշարի կառուցում	գմ	74.00	4.09	302.660
7	Մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում	մ^2	42.00	1.31	55.020
8	Մետաղական կարկասի իրականացում	տ	1.34	111.98	150.053

9	Ներդիր տարրերի տեղադրում	տ	0.05	708.97	35.449
10	Անցքերի շաղափում	հատ	18.00	0.38	6.840
11	Դյուբելների տեղադրում l=250մմ	հատ	18.00	0.04	0.720
12	Պողպ. խողովակ 100x100x4մմ	գմ	64.00	6.36	407.040
13	Պողպ. խողովակ 50x50x2մմ	գմ	52.40	1.53	80.172
14	Պողպ. խողովակ 20x20x2մմ	գմ	96.00	0.58	55.680
15	Աստիճանների տակ խամքարի լիցք	մ^3	8.80	22.68	199.584
16	Բետոնե հարթակի պատրաստում B15 դասի բետոնից	մ^3	2.10	43.71	91.791
17	Մետաղական ճաղաշարի կառուցում	գմ	108.00	3.50	378.000
18	Մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում	մ^2	12.39	1.10	13.629
19	Պողպ. խողովակ 20x20x2մմ	գմ	108.00	0.50	54.000
20	Աստիճանների երեսապատում բազալտե սալերով 30 մմ	մ^2	12.20	19.99	243.878
	Ընդամենը				**2,997.953**
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					**32.58%**
	Պարիսպի կառուցում				
1	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	2.28	4.39	10.009
2	Ե/բ միաձույլ միջուկների պատրաստում B20 դասի բետոնից	մ^3	0.02	96.56	2.124
3	Պատերի կառուցում տուֆի կանոնավոր ձևի քարերից 20սմ հաստ.	մ^3	1.50	25.93	38.895
	Ընդամենը				51.029
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					**0.55%**
	Հրդեհային ազդարարում				
1	Մուտքանի ղեկավարման հսկիչ պանել,ստեղնաշարով	հատ	1.00	50.50	50.500
2	Բջջային հեռախոսահամարից ավտոմատ ահազանգի սարք	լ-կզմ	1.00	29.76	29.760
3	Ավտոմատ սնուցման բլոկ	հատ	1.00	44.58	44.580
4	Մարտկոց 12Վ,28 Ահժ	հատ	1.00	16.85	16.850
5	Ծրագրային ապահովում	լ-կզմ	1.00	101.85	101.850
6	Տագնապի կոճակ	հատ	1.00	3.72	3.720
7	Ծխային տվիչ	հատ	16.00	16.13	258.080
8	Լուսաձայնային շչակ	հատ	1.00	14.96	14.960
9	Մալուխ CV4U	մ	240.00	0.22	52.800
10	Մալուխ պղնձե ջղերով, մեկուսացված,հատվածքը 3x1.5 մմ2 ВРГ	մ	2.00	0.69	1.380
11	Ճարման133	հատ	720.00	0.04	28.800

12	Պոլիէթիլենային գոֆրե խողովակ Φ15մմ	գմ	240.00	0.44	105.600
13	Ակոսների բացում 50x50մմ չափսի	գմ	60.00	0.35	21.000
14	Ակոսների փակում գաջով	մ^2	4.00	2.29	9.160
15	Տանիքում մետաղական ամրակապման դետալներ	կգ	24.00	0.68	16.320
16	Մետաղական ծոպան (տրոս) d6մմ	մ	120.00	0.34	40.800
17	Միջնորմի մեջ անցքի բացում	հատ	4.00	2.78	11.120
18	Միջնորմի անցքի վերականգնում	հատ	4.00	0.95	3.800
19	496 մմ հաստությամբ պատի մեջ անցքի բացում	հատ	1.00	2.78	2.780
20	496 մմ հաստությամբ պատի մեջ անցքի վերականգնում	հատ	1.00	1.05	1.050
21	Միջհարկային ծածկի մեջ 300x100մմ անցքի բացում	հատ	1.00	3.85	3.850
22	Միջհարկային ծածկի մեջ 300x100մմ անցքերի վերականգնում	մ3	0.06	96.99	5.819
	Ընդամենը				824.579
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					8.96%
Լուսավորություն					
1	Լուսավորության վահանակ ավտոմատ անջատիչներով	լրակ	1.00	24.89	24.890
2	Լուսատու առաստաղային 600մմx600մմ, LED լամպով 220 Վ, 36 ՎՏ	լրակ	8.00	25.37	202.960
3	Հաղորդալար պղնձե, մեկուսացված,բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՊՎr 3x4 մմ2	գմ	80.00	1.07	85.600
4	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՊՎr 3x2,5 մմ2	գմ	70.00	0.81	56.700
5	Անջատիչ միատակ 220 Վ, 6Ա,տուփով	հատ	2.00	1.51	3.020
6	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով, 220 Վ, 6 Ա, տուփով	հատ	12.00	1.88	22.560
7	Հաղորդալարի տուփ	գմ	95.00	3.20	304.000
8	Ճյուղավորման տուփ	հատ	4.00	0.11	0.440
9	Ճարմանդ հաղորդալարերի ամրակապման համար	հատ	120.00	0.04	4.800
10	200 մմ հաստությամբ միջնորմի մեջ Φ20 մմ անցքի բացում	տեղ	2.00	0.98	1.960
11	0.4 կՎտ լարման ցանցին միացում, ներառյալ մալուխ, միացման վճար	հմլր	1.00	543.21	543.210
12	Ցինկապատ շերտապողպատ 40x4 մմ	գմ	30.00	1.20	36.000
13	Ցինկապատ շերտապողպատ 25x4 մմ	գմ	30.00	0.80	24.000
14	Ցինկապատ անկյունային պողպատ 50x50x5 մմ, L=2,5մ	հատ	6.00	7.67	46.020
	Ընդամենը				1,356.160
Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս					14.74%
	Ընդամենը				9,201.626

	ԱԱՀ, 20%				*1,840.325*
	Ընդամենը				11,041.951

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Քանդման և տեղափոխման աշխատանքներ				
1	Դռան ապամոնտաժում	$մ^2$	2.94	1.32	3.8808
2	Սոսնձաներկի մաքրում պատերից	$մ^2$	6.5	0.1	0.65
3	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչ և 13կմ	տ	126.87	2	253.74
	Ընդամենը				**258.2708**
	Տոկոսը ամբողջի համեմատ/**Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս**				**4.89%**
	Կառուցողական աշխատանքներ				
1	50x4 անկյունակի արժեքը	գմ	8.4	1.71	14.364
2	Ե/բետոնե միաձույլ բարավորների պատրաստում B12,5 դասի բետոնից	$մ^3$	0.49	40	19.6
	Ընդամենը				**33.964**
	Տոկոսը ամբողջի համեմատ/**Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս**				**0.60%**
	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող	$մ^2$	0.16	41.62	6.6592
2	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում չբացվող	$մ^2$	0.16	26.28	4.2048
3	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 450մմ լայնությամբ	$մ^2$	1.35	1.57	2.1195
4	Պատուհանագոգ լայնությունը 450մմ արժեքը	գծմ	3	5.39	16.17

5	Մետաղական դռան փականներ	հատ	4	4.76	19.04
6	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում	$մ^2$	23.04	0.67	15.4368
7	Երկաթյա դռան տեղադրում	$մ^2$	11.52	35	403.2
8	Բետոնի շերտի պատրաստում B15 դասի բետոնից պատուհանների տակ	$մ^3$	0.8	30	24
	Ընդամենը				490.8303
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				9.58%
	Հատակներ				
1	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	$մ^2$	6	1.32	7.92
2	Հատակների պատրաստում կերամոգրանիտե սալերից 800x800	$մ^2$	60	12	720
3	Կերամոգրանիտե շրիշակների պատրաստում, h=10սմ	գմ	44	1.5	66
	Ընդամենը				793.92
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				21.41%
	Ներքին հարդարման աշխատանքներ				
1	Շեպերի մետաղական հարդարող անկյունակների տեղադրում	գմ	36	0.15	5.4
2	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի /նոր սվաղ/	$մ^2$	40.2	1.8	72.36
3	Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի /նոր սվաղ/	$մ^2$	54.1	1.9	102.79
4	Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում	$մ^2$	13.7	2.1	28.77
5	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով բարելավված որակի	$մ^2$	118.8	1.6	190.08
6	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, մածկապատմամբ	$մ^2$	60	1.7	102
	Ընդամենը				501.4
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				6.68%
	Տանիքի աշխատանքներ				
1	Տանիքի փայտե կոնստրուկցիաների տեղադրում (ծպեղնատոք, հենահեծան, կանգնակ, թեքան, տախտակամած)	$մ^3$	0.8	100	80
2	Տանիքի ծածկի իրականացում ԿՊ25-0.55մմ ցինկապատ թիթեղով՝ ներառյալ կավարամածը	$մ^2$	75	3	225

3	Փոքր ծածկույթների իրականացում հարթ ցինկապատ թիթեղից 0.55մմ հաստ.	մ^2	22.4	4.83	108.192
4	Զրհորդանների իրականացում ցինկապատ 0.55մմ թիթեղով՝ տախտակամածի իրականացմամբ	գմ	2	14.79	29.58
5	Զրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից Φ100մմ, ներառյալ ջրհոս ձագարները	կ-տ	2	13	26
6	Մետաղական ճաղաշարի կառուցում	գմ	74	2	148
7	Մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում	մ^2	42	0.8	33.6
8	Մետաղական կարկասի իրականացում	տ	1.34	111.98	150.0532
9	Ներդիր տարրերի տեղադրում	տ	0.05	708.97	35.4485
10	Անցքերի շաղափում	հատ	18	0.38	6.84
11	Դյուբելների տեղադրում l=250մմ	հատ	18	0.04	0.72
12	Պողպ. խողովակ 100x100x4մմ	գմ	64	3	192
13	Պողպ. խողովակ 50x50x2մմ	գմ	52.4	1	52.4
14	Պողպ. խողովակ 20x20x2մմ	գմ	96	0.58	55.68
15	Աստիճանների տակ խամքարի լիցք	մ^3	8.8	11	96.8
16	Բետոնե հարթակի պատրաստում B15 դասի բետոնից	մ^3	2.1	30	63
17	Մետաղական ճաղաշարի կառուցում	գմ	108	1.8	194.4
18	Մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում	մ^2	12.39	1.1	13.629
19	Պողպ. խողովակ 20x20x2մմ	գմ	108	0.5	54
20	Աստիճանների երեսապատում բազալտե սալերով 30 մմ	մ^2	12.2	19.99	243.878
	Ընդամենը				1809.2207
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				32.58%
	Պարիսպի կառուցում				
1	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	2.28	4.39	10.0092
2	Ե/բ միաձույլ միջուկների պատրաստում B20 դասի բետոնից	մ^3	0.02	96.56	1.9312
3	Պատերի կառուցում տուֆի կանոնավոր ձևի քարերից 20սմ հաստ.	մ^3	1.5	25.93	38.895
	Ընդամենը				50.8354
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				0.55%
	Հրդեհային ազդարարում				
1	Մուտքանի ղեկավարման հսկիչ պանել,ստեղնաշարով	հատ	1	40	40
2	Բջջային հեռախոսահամարից ավտոմատ ահազանգի սարք	լ-կզմ	1	20	20

3	Ավտոմատ սնուցման բլոկ	հատ	1	39	39
4	Մարտկոց 12Վ,28 Աxժ	հատ	1	16.85	16.85
5	Ծրագրային ապահովում	լ-կզմ	1	80	80
6	Տագնապի կոճակ	հատ	1	3.72	3.72
7	Ծխային տվիչ	հատ	16	12	192
8	Լուսաձայնային շչակ	հատ	1	10	10
9	Մալուխ CV4U	մ	240	0.1	24
10	Մալուխ պղնձե ջղերով, մեկուսացված,հատվածքը 3x1.5 մմ2 ВРГ	մ	2	0.69	1.38
11	Ճարման133	հատ	720	0.04	28.8
12	Պոլիէթիլենային գոֆրե խողովակ Φ15մմ	գմ	240	0.3	72
13	Ակոսների բացում 50x50մմ չափսի	գմ	60	0.35	21
14	Ակոսների փակում գաջով	մ²	4	2.29	9.16
15	Տանիքում մետաղական ամրակապման դետալներ	կգ	24	0.68	16.32
16	Մետաղական ճոպան (տրոս) d6մմ	մ	120	0.34	40.8
17	Միջնորմի մեջ անցքի բացում	հատ	4	2.78	11.12
18	Միջնորմի անցքի վերականգնում	հատ	4	0.95	3.8
19	496 մմ հաստությամբ պատի մեջ անցքի բացում	հատ	1	2.78	2.78
20	496 մմ հաստությամբ պատի մեջ անցքի վերականգնում	հատ	1	1.05	1.05
21	Միջհարկային ծածկի մեջ 300x100մմ անցքի բացում	հատ	1	3.85	3.85
22	Միջհարկային ծածկի մեջ 300x100մմ անցքերի վերականգնում	մ3	0.06	96.99	5.8194
	Ընդամենը				**643.4494**
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				**8.96%**
	Լուսավորություն				
1	Լուսավորության վահանակ ավտոմատ անջատիչներով	լրակ	1	20	20
2	Լուսատու առաստաղային 600մմx600մմ, LED լամպով 220 Վ, 36 ԿՏ	լրակ	8	11	88
3	Հաղորդալար պղնձե, մեկուսացված,բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՈՒՐ 3x4 մմ2	գմ	80	0.6	48
4	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՈՒՐ 3x2,5 մմ2	գմ	70	0.4	28
5	Անջատիչ միատակ 220 Վ, 6Ա,տուփով	հատ	2	1.51	3.02
6	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով, 220 Վ, 6 Ա, տուփով	հատ	12	0.6	7.2
7	Հաղորդալարի տուփ	գմ	95	3.2	304

8	Ճյուղավորման տուփ	հատ	4	0.11	0.44
9	Ճարմանդ հաղորդալարերի ամրակապման համար	հատ	120	0.04	4.8
10	200 մմ հաստությամբ միջնորմի մեջ Φ20 մմ անցքի բացում	տեղ	2	0.98	1.96
11	0.4 կՎտ լարման ցանցին միացում, ներառյալ մալուխ, միացման վճար	հմլր	1	543.21	543.21
12	Ցինկապատ շերտապողպատ 40x4 մմ	գմ	30	1	30
13	Ցինկապատ շերտապողպատ 25x4 մմ	գմ	30	0.7	21
14	Ցինկապատ անկյունային պողպատ 50x50x5 մմ, L=2,5մ	հատ	6	7.67	46.02
	Ընդամենը				1145.65
	Տոկոսը ամբողջի համեմատ/Տոկոսը տվյալ բաժնի համեմատ/մնացորդ տոկոս				14.74%
	Ընդամենը				5727540
	ԱԱՀ, 20%				1145508
	Ընդամենը				6873048

*Միավորի արժեքի մեջ ընդգրկված է նաև շահույթը՝ 10%

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևանում՝ Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլուկ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի փ. 21
Հ/Հ 11811008003300
ՀՎՀՀ 00910785

տնօրեն----------Բանգոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ 5-ՐԴ ՋԱՆԳՎԱԾԻ ՄԻԿՈՅԱՆ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԿԻՍԱԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ 5-ՐԴ ՋԱՆԳՎԱԾԻ ՄԻԿՈՅԱՆ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԿԻՍԱԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած (45 օրացուցային օրից սկսած)	25.12.2021 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլուկ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի փ. 21
Հ/Հ 11811008003300
ՀՎՀՀ 00910785

տնօրեն----------Բանգիյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 3
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14.05.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքների կատարման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 24 Հոկտեմբեր 2021թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գլուկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բանգոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 14-ին կնքված ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքների կատարման թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 5.3 և 8.1 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 5.3 և 8.1 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքների կատարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Աշխատանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2021 թ.-ի դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կադաստրի կոմիտե
ք. Երևան Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլուկ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի փ. 21
Հ/Հ 11811008003300
ՀՎՀՀ 00910785

տնօրեն----------Ա. Բանգոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
14.05.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/03 *պայմանագրի*
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքներ)

ՀՀ դրամ

Աշխատանք											
հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.մի ջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/504	ՀՀ Կադաստրի կոմիտեի Նոր նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման կիսաավարտ աշխատանքներ	3436524	6873048	6873048	6873048	6873048	6873048	6873048	6873048	6873048

Պատվիրատու

Կադաստրի կոմիտե
ք. Երևան Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլուկ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի փ. 21
Հ/Հ 11811008003300
ՀՎՀՀ 00910785

տնօրեն----------Ա. Բանգոյան
/ստորագրություն/
Կ.Տ